

Դան ուրիշ շատ մը լատիներէն յիշատակարաններ, որ ի Հայոց շինուած ու Հայոց սեպհական ստացուածքն են. բայց ասոնց ստորագրութիւնը մեր նպատակէն դուրս է:

Տրամախան ուրախութեամբ գրեցի այս տողերը, ուրախութեամբ, վասն զի ասով գոնէ լիցի ի վրայ անմահացողացն կը համարիմ մեր պապերուն Հայաբաղարիս որմին ու քարերուն վրայ քանդակած ու կանգնած յիշատակարանները. — տրամախան, վասն զի հոգւոյս աշուրներուն նայելով անցերջն եւ ապագային, կը տեսնեմ թէ ուստի ուր ենք հասած եւ ուր կ'երթանք:

ՅՈՎԷ. ԱՆՅՈՒ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

(Ն Ե Գ Ս Ո Ն Ի Ս)

Ընթերի եմ. ետքդդ դու վստահալից,

տատաղալով եղբայր.

Ով եւ լինիս, քնաւ մի դու վստահ.

Թող այժմ շարութիւն. 'ւ անխառնութիւն

իշխն քնաբար.

Թող արտաստուով ողորդի երկիր.

Քո սուրբ գաղափար ոտնակոն եղած

թող թշնամանով.

Թող հոսն անմեղ արեւն ատուներ,

Կու զայ ժամանակ, հաւատով եղբայր,

Բէկ կը կործանով,

Եւ երկի վերայ նորից կ'իջնէ սէր:

Ո՛չ շղթաների ծանրութեամբ մշշուած.

Ո՛չ փուշալիցով,

Ո՛չ դժուարակիր իսկնի ուսերին —

Նա կու զայ աշխարհ շքող զօրութեամբ

Եւ հարտ փառքով,

Եւ երջանութիւն փառ Հանք ձեռն.

Եւ էլ չեն լինել ոչ դաւն արտասուք,

Ոչ քնն, ոչ նախանք,

Ոչ անխաշ շիրիւ, ոչ ստորկութիւն,

Ոչ կարօտութեան հոգեմաշ խաւար,

Խաւար անթափանց.

Ոչ սուր մահաբեր, ոչ էլ մահու սին:

Ընկեր. չէ ցնդոր սիրոյ այս պայման

Իշխն աւետից,

Ձէ յոյս սքանչիլ այս յոյս լուսափայլ.

Մի անգամ նայիր, տես նա շափազանց

բազմազն չարիք.

Նոյնպէս չափազանց թանկորացել մեղայլ:

Արեւամբ նեղողուած կը զաղոր աշխարհ

ստուալանքներով,

Եւ անմիա կողից խոնջած վստահալ

Դէպ ի փրկարար եւ դէպ ի սուրբ սէր

Ի սպիտակաշար սիրոյ

Աշինք թախմալից աղերսով լեցուած:

Ե. Մ.

Գ Ր Յ Տ

Տաճարում կանգնած, կր սուրբ սեղանից
Հուով եմ սիրոյ խօսքեր փրկչական.
Մշտում է կուրծքիս ծանրազայն թակիծ —
Տխուր գիտակցութիւն շարութեան մարդկան:

Մտածում եմ խորին, ով արդեօք մեր մէջ
Այդ աստուածեղէն փառ եօսքի կըտակ
Անարատ սրտում պահել է անշէջ
Որպէս մի անանց երկայնի կըտակ:

Ով է միշտ պաշտել անկեղծ համբովինը
Քոյում մի սրտից մարդը 'ւ անկաշտ.
Ով ճշմարտութեան լուսափայլ ուտունը
Քարող է միշտ՝ հաւատով պայծառ:

Ով է ընկերոջ անձի ուն սիրել,
Ով մորմաւորին չէ ասել 'յիմար',
Ով է թշնամուն վնասն ներել,
Ով ապրել է տիւ սուրբ գործի համար:

Թախմալից կանգնած լոյն տաճարում
Որպէս մարմնացած անգոր թախմալից,
Նորից աստուածեամբ, յուրիւ բարբառում,
Հնչում են 'զմեղք', սէր, խաղաղութիւն...

Բայց մարդկան վաղուց բարոյցած սրտեր,
Խուռ են յորդորող փրկչական ծայրին.
Որպէս ժայռերում ընկած հատիկներ
Արդ չեն բուսցնում սերմնահացանին:

Ե. Մ.

ԱՐՈՒՆԵՍՏԵԼԻՍՏԵԼԻՍ

ԱՐՈՒՆԵՍՏԵԼԻՍՏԵԼԻՍ ԱՐՈՒՆԵՍՏԵԼԻՍՏԵԼԻՍ

Գաղղից Հասարակագիտութեան գահէն
Ինչն Ստաի Բառնոյ Մայիս Յին Հանդիսապէս
բացաւ Բարիդի Համաշխարհային Արուեստա-
Հանդէսն, որուն գրեթէ երեք տարիէ վեր
պատրաստութիւն կը տեսնուէր: Որչափ ալ կը
յուսացուէր որ բանալու որդեկալ օրն ամենայն
ինչ պատրաստ կ'ըլլայ, սակայն մինչեւ ցայսօր
պատրաստութիւնը վերջնականապէս լինցած չէն,
Եւ անշուշտ աւելի բախտաւոր պիտի ըլլան
օտարերկրեայ այցելուք, եթէ Յուլիան երթան
Բարիդի Արուեստահանդէսն:

Մենք այսօր կը սկսինք գնել մեր ընթեր-
ցողներուն առջեւ այն Արուեստահանդիսին նկա-
րագրութիւնն, եւ կը ջանանք հետզհետէ թէեւ
համառօտ բայց ամբողջական գաղափար մը տալ:
Բարիդի Արուեստահանդիսին գլխաւոր
մասերն առջեւ այցելուաց առաջին անգամ ներ-
կայացողն է Գ. Է. Բիլէ գաղղիացի ճարտարա-
պետին կառուցած հանդիսաւոր աշտարակն, ու
րուն տեսութիւնն մարդուս վրայ անշափ զար-
մացումն եւ երկիւղ մը միանգամայն կ'ազդէ:
Ինչ որ գործնականն Ամերիկա չկրցաւ ընել, Է-

րաւ ճարտարն գաղղիւս: 1875ին երբ Գիլ-տելֆիայի Համաշխարհային Արուեստահանդիսին պատրաստութիւնը կ'ըլլային, ուղեցին Ամերիկացիք 1000 անգլ. ոտք բարձրութեամբ (որ Հնաւորս է գրեթէ 300 մեդր) աշտարակ մը շինել երկաթի խողովակներէ: Արտաքաղ կարգի գծաւորութիւնը, որոնց պէտք էր յաղթել, յուսահացուցին յանգուգն եւ մեծագործ Ամերիկան: Եւ այս պատճառաւ իրաւունք մ'ունէին ճարտարագետք ի սկզբան ճիշտարկութեան էյ-ֆելեան աշտարակին տարակուսելով՝ թէ արդեօք կարելի պիտի ըլլայ շէնքն ի կատար հասած տեսնել: Եւ ահա այսօր հազիւ երկու տարւոյ կարճ միջոցին մէջ աշխարհիս առջեւ երկնա-երեմ կանգնուեցաւ կեցաւ նոյն աշտարակն, որուն առջեւ յաղթ շինութիւնը իրրեւ մըջին մը կ'երեւան:

Էյֆելեան աշտարակն նոյն իսկ դեռ ի ծրագրի եղած ժամանակ՝ սկսաւ գրեթէ ամեն պատկերազարդ հրատարակութեանց մէջ շրջան ընել, եւ այս օրս գրեթէ ամէնքն տեսած են:

Էյֆելեան աշտարակին բարձրութիւնն, ինչպէս հանրածանօթ է, 300 մեդր է, որուն վրայ կայ 8 մեդր բարձր «լապտեր», մը եւ շանթածիգ: Այս ամբողջ երկաթեայ շէնքին գործաւուած է 4.800 տակառաշափե աւելի երկաթ: Հէնքը սուր բուրդի ձեւով է, եւ ամբողջ շորս ոտքի վրայ կը կենայ: Իւրաքանչիւր ոտքերու կողմակալ երկայնութիւնն է 15 մեդր: Ոտքերն իւրարմէ 100 մեդր հեռու են, եւ ասոնց վրայ շինուած է գլխաւոր յաղթ կամարն որուն վրայ կը կենայ բուրգն: Այս բարձրութեան մէջ սաստկաշունչ հողմոց բռնութեան դէմ կենալու համար՝ աշտարակին պէտք եղած ամրութիւնն ճշդիւ հաշուել շատ դժուարին էր, եւ այս էր պատճառն՝ որ ի սկզբան ամեն ճարտարագետք կէս մ'անկարելի կը համարէին գործն: Բայց հնարագիւտ ճարտարագետն իւր աշտարակն վանգալաձեւ շինելով՝ հողմոց բռնութիւնն շատ նուազեցուցած է, այնպէս որ եթէ հողմոյ արագութիւնն մէկ երկվայրկեանի մէջ 10 մեդր ըլլայ, որ շատ է, աշտարակի ծայրն հազիւ 0.038 մեդր ճծում մը պիտի ունենայ: Աշտարակի գործածութեան իրաւունքն էյֆել ճարտարագետին տրուած է 20 տարւոյ համար, եւ վեր երդոյներէն ու պանդոկներու վարձին եկած եկամուտն իրն է: Առաջին դասիկոնի մուտքն է 2 ֆր. երկրորդին՝ 3 ֆր. երրորդին՝ 5 ֆր. իսկ կիրաքի օրերն՝ նոյնքան կեսը:

Առաջին գաստիկոնին մէջ, որ գետնէն 70

մեդր բարձր է, կայ չորս պանդոկ, որոնցմէ իւրաքանչիւրն երկայնութիւնն է 25 մեդր, լայնութիւնն՝ 15. իսկ նոյն դասիկոնին ամբողջ տարածութիւնն է 4200 քառակուսի մեդր: Եւրկորդ գաստիկոնին վրայ կայ՝ բաց ի երկու պանդոկէ, Figaro լրագրոյ սեպահան սրահն, որ ամենարագաստիպ մտնող Արուեստահանդիսի լրագիր մը կը տպուի: Երրորդ գաստիկոնին վրայ, որ 350 քառակուսի մեդր տարածութիւն ունի, «լապտերը» բարձրացած է, որ ըստ ինքեան չորեքկամարեան յաղթ թաղի մը կը նմանի, որուն ծայրն է բուն ապակեայ «լապտեր» անուանալն, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ բոլորակ սրահի մը, որուն մուտքն այցելուաց փակուած է, եւ միայն գիտնոց ուսումական հետազոտութեանց վերապահուած է: Ասկէ կը սփռն ելեկտրական արեգակնային ճառագայթներ, որոնցմով ոչ միայն ամբողջ Մարսի գաշտն ու չորհակայքն, ուր ղետնդուած են Արուեստահանդիսին շինութիւնքն, այլ եւ Բարիզի ամեն յիշատակարաններն կրնան լուսաւորուիլ: Աշտարակն ելեկտրական կանթեղներն առաջին կարգի են, այնպէս որ 60 քիլոմեդր հեռաւորութեամբ կրնան տեսնուիլ:

Պիտի ըստի՝ թէ այսչափ բարձր ո՞վ կրնայ ելլել, եւ քանի՞ ժամ՝ հարկ պիտի ըլլայ աշտարակին ծայրն հասնելու, եւ այն՝ կատարեալ շնչասպառ եւ ուժամարկ ըլլալէ ետեւ: Բայց ամենեւին ասոնց վրայ մտածելու հարկ չկայ: Վասն զի ամենանոյր յօրինուածով վերամբարձ գործիքներ կան, որոնց մէջ մարդ հանգիստ նստած ժամանակ՝ առանց իմանալու աշտարակին մէկ սրունքին վրայէն խղիղաձեւ վեր կ'ելլէ առաջին գաստիկոն. անկէ երկրորդ եւ երրորդ գաստիկոն վերամբարձ գործին ուղղաձիգ կ'ելլէ մինչ ծայրն: Բայց ո՞վ որ իւր սրունքը բաւական զօրաւոր կը համարի, կրնայ 337 աստիճան սանդուղէն վեր ելլել ոտքով մինչեւ առաջին գաստիկոն, անկէ անդին ելլելու համար մարդ բոլորովին յոգնած եւ վատաբալեան՝ կը ստիպուի մտնել վերամբարձ գործւոյն մէջ: Այս վերամբարձ գործիքներն եթէ համեմատեն նոյն պիտի սովորական գործեաց, պէտք ենք ըսել՝ որ ասոնք ալ հրաշալիք են իրենց մեծութեամբն եւ գործելու արագութեամբն: Առաջին գաստիկոն ելլելու համար երկու տարբեր յօրինուածով շինուած վերամբարձ գործիք կայ. մէկը Combaltzier ըստածն, որ մէկ անգամէն 100 հոգի կ'առնու, եւ մէկ երկվայրկեանի մէջ մէկ մեդր վեր կ'ելլէ. իսկ միւսն՝ Otis ըստածն, որ

50 հոգի կանուս եւ մեկ երկվայրկեան մէջ երկու մեզք վեր կ'ընէ։ Երկրորդ դատիկունքն մինչեւ վեր հանելու պաշտօնն այս երկրորդ տեսակին եւ լատ այսմ՝ թիթէ դատիկունքնու մէջ գործելոյն կանգ առնելովն կորսուած ժամանակը չհաշուենք, կրնայ մարդ 2 1/2 վայրկեանի մէջ աշտարակին ծայրը հասնի։ Անբնական արագութիւն մը, որ սակայն, ինչպէս կ'ապահովընեն ծարարարայեանք, բոլորովին անվտանգ է։

Հաշիւ ըրած են եւ գտած՝ որ աշտարակն միեւնոյն ժամանակ կրնայ 10.000 հոգի մէջն առնուլ, որոնք հետեւեալ կերպով պէտք են տեղադրուիլ։ Առաջին դատիկունի մէջ՝ 4 պանդոկ ի միասին կը մտնեն 1600 հոգի, նոյն դրստիկունին արտաքին կողմնական անցքերուն մէջ 4000 հոգի, ներքին անցքերուն մէջ՝ որոնք պանդոկներն իրարմէ կը բաժնեն, 400 հոգի։ Երկրորդ դատիկունի մէջ՝ 1500 հոգի, երրորդին մէջ՝ 500 հոգի, վերամբարձ գործեանց մէջ եւ սանդուղներու վրայ ելլող ինքնու պոյնտը եւ սանաւադը՝ 2000 հոգի, ամենն ի միասին — ասոր հաւոյք հոգի։

Այս յաղի շէնքն, որչափ ալ ստորագրուի, կարելի չէ ինչպէս որ է ըմբռնել. կենդանի աշէ մը միայն կրնայ ճշգրիտ գաղափար մը կազմել։ Համբիւն աշտարակն աշխարհահայտն Բարիքի Տաճարն իւր ծագն հասցուն, եւ Բարիքի նոր ձգիչ ու զիւթիչ զօրութիւն մը տուաւ։

ԲԵՐՈՑԱԳԵՐՆԵՐ

ԽԱՆՈՒ ԺԵՓՈՂ

ՎԵՐՋԻՆ ԺԵՓՈՒՆՆԵՐԵՆ ՎԵՊ ՄԸ

9. Հայր ձև որդի։

(Զարմուխ-ի-ն-ն)

Երբոր Գուլաղոյ ներս մտաւ, ամուսինն ծանր շունչ մ'առաւ եւ արագութեամբ բազմոյցն ելաւ, ներս մտնողին մասնանիշ ընելով ըսաւ։ «Ա՛ս ա՛մուսին, Տէր, կրնայ անձամբ իրեն հետ խօսիլ եւ ամեն բան հարգողէլ, այս ինչգիւն մէջ առաջին որուն չի՛նք ձայնն իրենն է։»

Պաշտօնական արագութեամբ ետ դարձաւ. Գուլաղոյ անմիջապէս ծանցաւ, որ զինքը զահեւրիցուն տունող լըտար պաշտօնական է։ Միայն այն զեւեղիկ պրական կերպարանքն սակաւիկ մի գուռնաւ մ'էրեւար։

Գուլաղոյ իւր որդիէն վերջին անգամ լսածնէն՝ գուռակեց շուտով այս պոյնտիկեան նպատակը։ Սեւ ամպ մը կ'անցէր երեսը. երկտառագ պաշտօնականին պարկեշտ կեցուածքն շատ իրեն

ճաշակին յարմար չէր գար։ Յրտութեամբ մը — «Ինչ կ'ուզէք — ըսաւ եւ զինքն մինչեւ ոտքն աշտով չափեց զինքը։

«Ի՛նչ կ'ուզեմ, Տէր, կրնեց խիմնէս. յարմար հարցում մը, բայց պատասխանն ալ պոյնտիկ, յարմար չէ։ Տէր, կ'ընդրեմ՝ որ ձեր աղքէին առաջին երբեմն երեսայու ինծի թիւղ տաք։ Ար ցունկամ որ հագած համազգեստս եւ դուստնած համազումս՝ զիս ծանշալաւ արգելք չըլլան ձեզի։»

«Ի՛նչ վառձանի համար, հարցոց կէ մ'արհամարհելով, բաւական ծանօթեմք ունիմ, եւ կը վստիսամ որ զձեզ ալ անոց մէջ խառնելով՝ ապականիչ տարր եր ներմուծած չըլլամ։»

«Ար հարցընէք, Տէր, թէ՛ «Ինչու» — հոս է ա՛յս դժուարին պատասխանը։ Թերեւս ձեր ամուսինն ինծի օգնութեան հասնի։ Իւր բարեբաւութեամբն բոլոր խնդիրս հեղութեամբ մտիկ ըսաւ. եւ անշուշտ ինծիմէ աւելի յարմար խօսք մը կը գտնէ։»

«Չէ, չէ, ըսաւ արագութեամբ Տոննա Իզապէլա, ձեր գտնն անձամբ վարեցէք, այս խնդիրս մէջ բոլորովին չեզոք կը մնամ։»

«Գուշակեցի, ըսաւ Գուլաղոյ, որ սկսած էր տանջուիլ, եւ ձեզի կը գրեմ,» Այս կերպով մը ծամբոյ զնեւել խօսք մըն էր. պաշտօնական անմիջապէս իմացաւ անոր միտքը, խորին արգանք ծուլցաւ. բայց գէտ չմեկնած՝ իւր սիրելիին հօրը հետեւեալ խօսքն ուղղեց. «Տէր, չէ՛ք ուզեր գտն յուսոյ նշոյլ մը տալ ինծի, գտն չէ՛ք կրնար ընել, որ աւար վրայ կը մտածեք, վասն զի ոչ թէ իմ կենաց միայն, այլ նաեւ ձեր գտնը երջանկութեանն ալ սակե կախում ունի։»

«Այո, ի՛թէ ստով կրնայք ձեզի ծառայել, ըսաւ Գուլաղոյ, հարկաւ կը մտածեմ,» Գեւոյ զեպ ի պաշտօնական ծուլցաւ, եւ պաշտօնական սենեկէն դուրս ելաւ։

Խիմնէս փողոց ելլելուն պէս՝ Գամբուլանային հանգիսեցաւ։

«Այ ընի՛ր, ըսաւ Գամբուլանա, ի՛նչ դարմանայի երեւոյթ։ Տէրութեան այս թշնամոյն տունը ի՛նչ գործ ունիք։»

«Կարծեցի որ զձեզ հոս պիտի գտնեմ, կըրկնեց Խիմնէս կարուկ կերպով. վասն զի ի շնորհս գահերիցուն եղած ցոյցին մէջ զձեզ ի զուր փրէտուցի։»

«Ա՛ս, հիմայ հոս եմ, ի՛նչ կը բարձաք, ըսաւ Գամբուլանա ծաղրելով։»

«Բարի լցի կը մաղթեմ,» ըսաւ Խիմնէս նոյն ձայնով եւ ծամբան յուսով տալաւ. Գամբուլանա մերձակայ պանդոկ մը մտաւ։ Թուղթ մը համեց զբպանէն եւ իրան քրեց. «Հպիւն թե իսկոյ տուն մտաւ, Խիմնէս եկաւ։ Քառորդ մ'իտքը Խիմնէս Գուլաղոյի տնէն ելաւ։» Իր անհոյ ծածկութի մը մէջ դրաւ եւ Տր. Գամբուլայի հասցին ուղղեց։

Կերպարէն ետքն այս նամակը Տր. Բուլանդոյի ձեռքը հասաւ. նոյնպէս Մանրեզ հրամանատարն ալ նամակ մ'առաւ. հետեւեալ բաժանդակութեամբ։

«Ձիւնուղական ատենա մ'ի ժողով կանչուեցաւ, որուն առջեւ Խիմնէս պաշտօնական պատասխան